Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1193-18.11.2025-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի առաջին մասի «զ» ենթակետում «ձմեռային ժամանակահատվածներում:» բառերից հետո լրացնել «Սույն ենթակետով նախատեսված արտոնությունից կարող են օգտվել նաև օդային տրանսպորտով մեկնող այն ֆիզիկական անձինք, ովքեր մեկնում են այն ավիաընկերությունների միջոցով, որոնք իրենց կոդով թռիչքներ չեն իրականացրել սույն ենթակետում նշված օդանավակայաններ, սակայն իրենց թռիչքները կազմակերպել և իրականացրել են թաց-լիզինգով (Wet Lease) շահագործվող օդանավերի միջոցով, և այդ օդանավակայանները չվերթերը մեկնարկելու օրվա դրությամբ սույն կետի տրամաբանությամբ համարվել են չսպասարկված:» նախադասությունը:

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածի առաջին մասի «զ» ենթակետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կետով նախատեսված արտոնության ժամկետը տրամադրվում է 36 ամսով (մինչև երկու անգամ ներառյալ 24 ամսով երկարաձգելու հնարավորությամբ), որը հաշվարկվում է ամիսների նվազման կարգով՝ սկսած տվյալ ուղղությամբ արտոնության տրամադրման հիմք հանդիսացող պայմանները բավարարող առաջին ավիաընկերության առաջին թռիչքի մեկնարկից: Սույն կետով սահմանված արտոնության ժամկետի կիրառման, այդ թվում՝

ժամկետի երկարաձգման կարգը, ինչպես նաև չսպասարկվող ուղղությանը և ավիափոխադրողի կողմից չվերթերի իրականացման նվազագույն հաճախականություններին ներկայացվող պահանջները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Հոդված 4. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները կատարվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում:

Հոդված 5. Սույն օրենքի 1-ին հոդվածում կատարվող լրացմամբ սահմանվող պահանջներով սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված արտոնության ժամկետների պահպանմամբ ֆիզիկական անձանց պետական տուրքի վճարումից ազատվելու իրավունքը գործում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Լրամշակված ~~նախագիծ~~

Երկրորդ ընթերցում

Կ-1193-18.11.2025-ՏՀ-011/1~~0~~

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29-րդ հոդվածի առաջին մասի «զ» ենթակետում «ձմեռային ժամանակահատվածներում:» բառերից հետո լրացնել «Սույն ենթակետով նախատեսված արտոնությունից կարող են օգտվել նաև օդային տրանսպորտով մեկնող այն ֆիզիկական անձինք, ովքեր մեկնում են այն ավիաընկերությունների միջոցով, որոնք ~~Եվրոպական միության թռիչքային անվտանգության ցանկում (սև ցուցակ) ընդգրկված լինելու հետևանքով~~ իրենց կողով թռիչքներ չեն իրականացրել սույն ենթակետում նշված օդանավակայաններ, սակայն իրենց թռիչքները կազմակերպել և իրականացրել են թաց-լիզինգով (Wet Lease) շահագործվող օդանավերի միջոցով, և այդ օդանավակայանները չվերթերը մեկնարկելու օրվա դրությամբ սույն կետի տրամաբանությամբ համարվել են չսպասարկված:» նախադասությունը:

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածի առաջին մասի «զ» ենթակետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կետով նախատեսված արտոնության ժամկետը տրամադրվում է 36 ամսով (մինչև երկու անգամ ներառյալ 24 ամսով երկարաձգելու հնարավորությամբ), որը հաշվարկվում է ամիսների նվազման կարգով՝ սկսած տվյալ ուղղությամբ արտոնության տրամադրման հիմք հանդիսացող պայմանները բավարարող առաջին ավիաընկերության առաջին թռիչքի մեկնարկից: Սույն կետով սահմանված արտոնության ժամկետի կիրառման, այդ թվում՝ ժամկետի երկարաձգման կարգը, ինչպես նաև չսպասարկվող ուղղությանը և ավիափոխադրողի կողմից չվերթերի իրականացման նվազագույն հաճախականություններին ներկայացվող պահանջները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Հոդված 4. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները կատարվում են սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած երեք ամսվա ընթացքում:

Հոդված 5. Սույն օրենքի 1-ին հոդվածում կատարվող լրացմամբ սահմանվող պահանջներով սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված արտոնության ժամկետների պահպանմամբ ֆիզիկական անձանց պետական տուրքի վճարումից ազատվելու իրավունքը գործում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ««ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1193-18.11.2025-ՏՀ-011/1)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Քանի որ տեղական ավիաընկերությունների՝ իրենց կոդով ավիափոխադրումներ չիրականացնելու հանգամանքն է հանդիսանում այն հիմքը, որը սույն օրենքի իմաստով նախատեսվում է կարգավորել՝ նոր ուղղություններով չվերթեր իրականացնելիս ֆիզիկական անձանց համար պետական տուրքի արտոնությունից օգտվելու համար, հիմք հանդիսացած պատճառը, այն է՝ Եվրոպական միության թռիչքային անվտանգության ցանկում (սև ցուցակ) ընդգրկված լինելը, նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է: Ըստ այդմ առաջարկում ենք, «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին»	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			ՀՀ ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագծի 1-ին հոդվածից հանել «Եվրոպական միության թռիչքային անվտանգության ցանկում (սև ցուցակ) ընդգրկված լինելու հետևանքով» բառերը:		